«ՔԱՌԱՆԻՇ ՀԱՄԱՐ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՑՈՒՑԱԿԸ

1. «Քառանիշ համար» Ծառայությունը «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ կողմից տրամադրվող ֆիքսված հեռախոսակապի ծառայություն է՝ նախատեսված միայն մուտքային զանգերի համար՝ համաձայն ստորև ներկայացված Աղյուսակ 1-ի՝

   Աղյուսակ 1. «Քառանիշ համար» ծառայության գնացուցակ՝

Միանվագ վճարումներ	**դրամ**
Հեռախոսագծի ակտիվացում*	9000
Ամսական վճարումներ	**դրամ**
Ամսական բաժանորդավճար յուրաքանչյուր քառանիշ հեռախոսահամարի համար	7200

Գները ներկայացված են ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ:

*Հեռախոսագծի ակտիվացման վճարը գանձվում է միանվագ, յուրաքանչյուր քառանիշ հեռախոսահամարի համար, հետվճարային կարգով, Ծառայությունների ակտիվացման ամսվա ընթացքում մատուցված Ծառայությունների դիմաց ներկայացվող հաշվի շրջանակում:

2. Սույն պայմանները գործում են «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ MPLS տեխնոլոգիայով բաժանորդագրված իրավաբանական անձ հանդիսացող բաժանորդների համար:
3. «Քառանիշ համար» Ծառայության համարներին կատարված զանգերի համար գանձումը կատարվում է զանգ կատարող բաժանորդից՝ որպես ՀՀ ֆիքսված համարին կատարված զանգ՝ համապատասխան վերջինիս գործող սակագնային պլանի:
4. «Քառանիշ համար» Ծառայության շրջանակում տրամադրված հեռախոսահամարից հնարավոր չէ իրականացնել ելքային զանգեր:
5. «Քառանիշ համար» Ծառայության շրջանակում տրամադրված հեռախոսահամարի ուղղությամբ հնարավոր չէ մուտքային զանգեր ստանալ միջազգային ուղղություններից:
6. «Քառանիշ համար» ծառայության համարներն ունեն հետևյալ ձևաչափը՝ 8xxx :